

Շոգովուրդ

134
(2614)

23 սեպտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՎ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 97



2016 թվականին Նիկոլ Փաշինյանն Ազատության հրապարակում ելույթ ունենալիս անդրադարձել էր նաև նոր ստեղծվելիք՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության սկզբունքներին ու դրույթներին և վստահեցնում էր, թե իրենք Ադրբեջանի հետ Ղարաբաղի հարցի կարգավորման վերաբերյալ երբեք չեն բանակցի, եթե գործընթացից բացակա է Արցախի Յանքապետության ներկայացուցիչը: «Այս իմաստով խստորեն դատապարտում ենք Յանքատանի Յանքապետության որևէ բանազևաճի՝ Ղարաբաղի հարցի կարգավորման շուրջ Ադրբեջանի հետ բանակցելը՝ Լեռնային Ղարաբաղի Յանքապետության ներկայացուցչի բացակայության պայմաններում»,- Ազատության հրապարակից հայտարարում էր Փաշինյանը: Սակայն, ինչպես շատ այլ դեպքերում, այս անգամ եւս, Փաշինյանը, իշխանության գալուց հետո, մոռացավ նախկինում իր կողմից արված հայտարարությունների մասին, և Արցախի մասին որոշումներ կայացվեցին՝ առանց նրանց ու նրանց ներկայացուցչի: Յանքատանի ու Ադրբեջանի պատվիրակություններն Արցախյան հարցի շրջանակներում հանդիպել են բազմիցս, սակայն ոչ մի անգամ Արցախից ներկայացուցիչ չի եղել: Ստացվում է՝ ընդդիմադիր ժամանակ արված իր հայտարարությունները նրա հերթական սուտն են եղել, և գալով իշխանության՝ նա չի կատարել դրանք՝ հերթական անգամ խաբելով ՀՀ հպարտ և արժանապատիվ քաղաքացիներին:

Սեպտեմբերի 14-ին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հետ քննարկել է երկրում ստեղծված պատերազմական վիճակը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իր թիմակիցներին Եվրոպայից ու Ռուսաստանից եկող ազդակների, մտահոգությունների մասին է փոխանցել: Մեզ հասած տեղեկություններով՝ ՔՊ-ականները քննարկել են, թե աշխարհի շատ երկրներ (հիմնականում՝ Եվրոպայի ու ԱՄՆ-ն) Յանքատանին հորդորում են, կոչ են անում, ինչ-որ տեղ անգամ ստիպում են ստորագրել «խաղաղության պայմանագիրը»: Բայց, ի տարբերություն Եվրոպայի, դա ստորագրելու խորհուրդ չի տալիս Ռուսաստանը, որովհետև ստորագրելը «Արցախից հրաժարվել» կնշանակի: Եվ այժմ անհասկանալի իրավիճակի առաջ է կանգնել Նիկոլ Փաշինյանը, չինասայով ինչ անել: Աժ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանն ասաց՝ նման հարցադրումով քննարկում չի եղել իրենց մոտ: «Ու, ընդհանրապես, խաղաղության պայմանագրին բավական է այդքան թեթև նայելը: Խաղաղության պայմանագիրը փաստաթուղթ չէ, որ դա կնքես ու դրանով ապրես: Այն պետք է իրողություններն արձանագրի, ու հիմա ինչպե՞ս խաղաղության պայմանագիր ստորագրես, երբ հողերը օկուպացված են: Ես կյանքում խաղաղության պայմանագիր չեմ կնքել, բայց դրա առաջին կետը, կարծում եմ, հետևյալը պետք է լինի, որ կողմերը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը: Այսինքն՝ մենք ընդունենք, որ եկել, մտել են մեր տարածքները. նման բան ինչպե՞ս կլինի»,- նշեց նա: Ըստ ՔՊ-ականի՝ նախ՝ պետք է պայմանավորվել, որ ադրբեջանական զորքերը դուրս գան մեր տարածքից, հետո՝ նոր պետք է խոսել պայմանագրի մասին: Ավելին, մինչև սահմանազատում չլինի, չի կարող երկրների միջև պայմանագիր կնքվել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 21-ին Եռաբլուրում ոստիկանության կողմից գողված զինծառայողների ծնողներին բռնության ենթարկած ոստիկանների նկատմամբ ուշագրավ գործընթաց է սկսվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանապետ Վահե Ղազարյանի աշխատասենյակում նույն օրը թե՛ խոսակցություն է եղել, որտեղ բարձրացվել է ոստիկանական գործողությունների հարցը: Մասնավորապես՝ ծնողներին նսեմացնելով բերման ենթարկելու համար Վահե Ղազարյանը բարկացել է ենթակայների վրա՝ ասելով, թե բիրտ ուժի կիրառման կարիք չկար. «Եթե երկու շարքով կանգնեիք, ձեզ չէին կարողանա ճեղքել, բայց այն, ինչ եղավ, անընդունելի է»: Ես այսպես, Վահե Ղազարյանն իր մեղքը փորձում է բարդել ենթակայների վրա, և, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 8 ոստիկանի լիազորություններ ժամանակավորապես կղաղարեցվեն, մինչև ոստիկանության ներքին անվտանգության ծառայությունը կատարի իր քննությունը. մինչդեռ հասարակական կազմակերպությունները շարունակում են պահանջել ոստիկանապետ Ղազարյանի հրաժարականը: Այն, ինչ տեղի ունեցավ Եռաբլուրում խայտառակություն էր և անբարոյականություն:



Վերջին շրջանի զարգացումները 2020 թվականից հետո ցույց են տալիս, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության միակ հենարանը մնացել են ոստիկանները միայն: Ղա, կարծես թե, փոխադարձ վերաբերմունք է, որովհետև Նիկոլ Փաշինյանն իր իշխանության հատկապես վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձնում ոստիկանության աշխատողներին, և ոստիկանությանը տալիս է ահռելի մեծ թվերով պարգևավճարներ՝ մյուս բոլոր պետական գերատեսչությունների համեմատ: Պետական պարգևատրումների ցանկի առաջին տեղում է ՀՀ ոստիկանությունը, որը պահպանում է Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, և որին հատկացված պարգևատրումները, ներառյալ՝ դրամական խրախուսումները և հատուկ վճարները, կազմում են 9 մլրդ 163 մլն 873 հազար դրամ: Հատկանշական է, որ մենք ոստիկանությունից բացի ունենք պետական համակարգի շատ ավելի կարելու գործառնություն իրականացնող աշխատակիցներ, ինչպիսիք են պաշտպանության նախարարությունը, ազգային անվտանգության ծառայությունը և այլ կառույցներ: Իհարկե, պաշտպանության նախարարությանը հատկացվող պարգևատրումների ֆոնդը գաղտնի է պահվում, բայց, վստահաբար, ոստիկանությունից շատ չէ, ու ոստիկանությունը գերիշխում է շատ պարգևավճար ստացող գերատեսչությունների ցանկը: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանը ոստիկանության հետ «գործարքի» է գնացել. «Ես ձեզ կտամ փող, դուք կպահեք իմ իշխանությունը», ու, այսպես էլ, 2020 թվականից մինչև հիմա, այս համերաշխության մեջ ապրում է: Տպավորություն է, որ մի ողջ ոստիկանական համակարգ Նիկոլ Փաշինյանի համար թիկնապահ է աշխատում և նրա անվտանգությունն է ապահովում, որի վառ և ամենատպավորիչ դրսևորումն եղավ Եռաբլուրում, երբ ոստիկանները ուժով ծնողներին իրենց որդիների գերեզմանից հրեցին ու հեռացրեցին, որպեսզի Փաշինյանը գա ու ծաղիկ դնի իրենց որդիների գերեզմաններին:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԿՍՎԻ

ԿՄԻՋԱՄՏԻ՝ ԱՐԴՅՈՔ ԻՐԱՆԸ

«Եթե ռազմական օգնության համար չեն դիմում, կամ, օրինակ, ռազմաբազա տեղադրելու հարցով չեն դիմում, ապա ի՞նչ կարող է անել Իրանը»,- «Ժողովուրդ» օրաթերթի հեռուստացուցման ժամանակ հայտարարեց Մեզ հեռուստացուցման անդրադարձում է հարցին՝ եթե դաստիարակ սկսվի, ապա ի՞նչ դիրքում կբռնի Իրանը:



-Տարաբնույթ պաշտոնյաների շուրթերից են հնչում, թե Իրանը չի կարող թույլ տալ, որ տարածաշրջանում սահմանների խախտում տեղի ունենա: Իրանն այս պահին ի՞նչ ազդակ է հղում, ու տարածաշրջանում ի՞նչ հավանական սցենարներ կարող են զարգանալ:

- Իրանը Հայաստանի տարածքային ամբողջականությունն իր կարմիր գիծ համարող հայտարարությամբ՝ կարող ենք ասել, որ իր կողմից տարածաշրջանային բոլոր գործընթացները պաշտպանող բոլոր տեսակի միջոցառումները ձեռնարկել է: Այս օրերին անգամ տեսնում ենք, որ սահմանի երկայնքով զորաշարժ է իրականացրել՝ Նախիջեանի հատվածից մինչև Հայաստանի սահման: Անգամ բարձրաստիճան պաշտոնյաների շուրթերից հայտարարություններ են հնչում, որ հայ-իրանական սահմանը կարմիր գիծ է, եւ թույլ չեն տալու տարածաշրջանային պետությունների տարածքային ամբողջականության խախտում, սահմանների փոփոխություն տեղի ունենա: Գուցե հիմա հարցնեք՝ արդյո՞ք պատերազմի ժամանակ իրանցիները պատրաստ են ներգրավվել գործողությունների մեջ: Ինչքանով են եմ ընկալում, ապա իրավիճակն այսպիսին է՝ իրանական դաշտը եւ նրանց կողմից արվող հայտարարությունները՝ օգնելու պատրաստակամության մասին են խոսում: Եթե, օրինակ, Հայաստանը ռազմական օգնության խնդրանքով կամ ժամանակավոր՝ Սյունիքում ռազմաբազա ունենալու խնդրանքով դիմի Իրանին (համեմատելիս, մենք տեսնում ենք ու լրատվական կայքերում, փորձագիտական դաշտում բազմաթիվ նման քննարկումներ կան) նրանց կողմից նմանատիպ պատրաստակամություն կա: Հակառակ պարագայում, եթե առանց խնդրանքի միջամտի սահմանային հարցերին, ապա դա, ըստ միջազգային իրավունքի՝ ագրեսիայի արժանացնում է:

Իրանը Հայաստանի տարածքային ամբողջականությունն իր կարմիր գիծ համարող հայտարարությամբ՝ կարող ենք ասել, որ իր կողմից տարածաշրջանային բոլոր գործընթացները պաշտպանող բոլոր տեսակի միջոցառումները ձեռնարկել է:

-Բայց մյուս կողմից տեսնում ենք, որ թուրք-արդրեջանական տանդեմը տարածաշրջանում իրավիճակ է ցանկանում փոխել: Հետեւաբար այս մասով ի՞նչ քայլեր է ձեռնարկում Իրանը:

-Արդեն ասացի, որ այս պահին անում է առավելագույնը՝ զորաշարժ է իրականացնում, սահմանի ամբողջ երկայնքով զորքերը մարտական պատրաստակամության է բերում, հայտարարություններով է հանդես գալիս եւ այլն: Ավելին պարզապես չի կարող անել, քանի որ պաշտոնական Երեւանը ռազմական օգնության կամ համատեղ զորավարություններ իրականացնելու խնդրանքով, առաջարկով չի դիմել: Կամ գուցե դիմել է, ինչի մասին մենք տեղյակ չենք:

-Տպավորություն է, որ տարածաշրջանային խաղաղության պետությունները կարծես ցանկանում են մեզ խաղից դուրս թողնել:

-Քանի որ այս պահին Իրանի աշխարհաքաղաքական կշիռն ամբողջ Հարավային Կովկասում վտանգված է, ապա նա այժմ ռիսկային հայտարարություններ կամ գործողություններ չի անի: Եթե, Աստված մի՛ արասցե, Հայաստանի ու Իրանի Իսլամական Հանրապետության սահմանը կտրվի, ապա այն աշխարհաքաղաքական կշիռը, որը Հարավային Կովկասում ուներ Իրանը մինչև այժմ, այլևս չի ունենա: Ստացվելու է՝ հարեւանություն՝ առկա պակաս մեկ պետության հետ: Եվ այս դեպքում «հարեւանություն» բառն օգտագործում եմ շատ մեղմ, քանի որ ստացվում է՝ թուրանական օղակ՝ շրջափակում թուրք-արդրեջանական ուժերի եւ պակասության գաղափարախոսությունը առաջ մղող ուժերի կողմից: Այսինքն, ամբողջ հյուսիսային սահմանը օղակի մեջ է վերցվում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՅԱՆԸ



ՄԵԾ ԽՅԱՆՈՒՄՆԵՐ ԵՆ



ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի ելույթն ու մասնակի մոբիլիզացիա հայտարարելու որոշումը ուշագրավ իրավիճակ է ստեղծել ՌԴ ում:

Արդեն երկու օր է ինչ Ռուսաստանի ու այլ երկրների սահմաններում մեծ խցանումներ են, եւ մեծ թվով երիտասարդներ են փորձում հեռանալ երկրից:

Շուրջ օրում, հաշվի առնելով այդ երկրի հանդեպ սանկցիաները՝ ռուսները շատ քիչ տեղ ունեն գնալու:

Այս պահին հերթեր են Կրաստանի եւ Մոնղոլիայի հետ սահմանին, իսկ դեպի Հայաստան տունն այլևս չի մնացել, գներն էլ աստղաբաշխական են՝ մեկ մլն դրամից ավելի:

ՊԵՏՏՅՈՒՋԵՐ ՀԱՇՎԻՆ

Սեպտեմբերի 21-ի երեկոյան ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեկնել է Նյու Յորք՝ մասնակցելու ՄԱԿ գլխավոր ասամբլեայի հերթական նիստին, որի ժամանակ պետք է նաեւ ելույթ ունենա: Հայաստանից Նյու Յորք մեկնած պատվիրակության կազմում ընդգրկված է 12 անձ:

Փաշինյանից բացի ՀՀ պետությունից հաշվին գործուղման են մեկնել նաեւ ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցը, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Միտր Մարգարյանը եւ վարչապետի աշխատակազմից 8 անձ՝ արարողակարգի պատասխանատու, արտաքին կապերի վարչության պետ, օպերատոր, լուսանկարիչ եւ այլք:

31.6 ՄԼՆ ԳՐԱՄ՝ ՎԵՐԱՆՈՐԹՄԱՆԸ

ՀՀ կառավարությունը էկոնոմիկայի նախարարությանը ավելի քան 31.6 մլն դրամ գումար կտա՝ զուգարան Նորոգելու համար: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախարարության Ա եւ Բ մասնաշենքերի թվով 12 սանհանգույցներ պետք է հիմնանորոգել, քանի որ խողովակաշարերը գտնվում են վատթարագույն վիճակում:

Բացի այդ, պարզվում է՝ յուրաքանչյուր հարկաբաժնում մի սանհանգույցի առկայությունը անհարմարություններ է առաջացնում արական եւ իգական սեռի աշխատակիցների համար:


Ներկայումս կան սանհանգույցներ, որոնք երկար տարիներ է ինչ չեն վերանորոգվել, գտնվում են անմխիթար եւ անբարեկարգ վիճակում:

Այս նպատակով ձեռք է բերվել նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն, ըստ որի՝ շինարարության ընդհանուր արժեքը կազմում է 31 մլն 664 հազար 200 դրամ:

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄԵՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԿԱՅԱՆԱՆ

Սեպտեմբերի 25-ին Հայաստանում կկայանան ժողովրդի ինֆրակառավարման մարմինների ընտրություններ: Եվ չնայած սեպտեմբերի 13-ից Հայաստանի սահմաններում լարված իրավիճակ էր, սակայն ընտրություններն ամեն դեպքում կկայանան:



Ռազմական գործողությունների հետեւանքով տուժած Սյունիքի մարզի երկու համայնքներում՝ Զաքարանում եւ Սիսիանում, առաջիկա կիրակին նույնպես համայնական ընտրակարգով ավագանու անդամի ընտրություններ են: Եվ, չնայած, բոլոր ուժերը հայտարարել էին քարոզարշավը դադարեցնելու մասին, սակայն դրանք այնուամենայնիվ փոքր մասշտաբներով բայց կատարվում են:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Սիսիանում դեկը փորձում է իր ձեռքը վերցնել ԱԺ Զաքարաբազային խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանը: Նա անում է ամեն ինչ, որ Սիսիանի քաղաքապետ ընտրվի Արմեն Հակոբջանյանը: Ի դեպ, Հակոբջանյանի շտաբի պետը հենց Կարեն Համբարձումյանն է:

Ռազմական գործողությունների հետեւանքով տուժած Սյունիքի մարզի երկու համայնքներում՝ Զաքարանում եւ Սիսիանում, առաջիկա կիրակին նույնպես համայնական ընտրակարգով ավագանու անդամի ընտրություններ են: Եվ, չնայած, բոլոր ուժերը հայտարարել էին քարոզարշավը դադարեցնելու մասին, սակայն դրանք այնուամենայնիվ փոքր մասշտաբներով բայց կատարվում են:

Ուշագրավ է սակայն, որ մյուս թեկնածուն ԶԳ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանի կնոջ քրոջ ամուսնու բաջանադի եղբայրն է՝ Արա Զաքարյանը: Վերջինս առաջադրվել է «Ապրելու երկիր» կուսակցության ցուցակով: Ասել է թե՛ Կարեն Համբարձումյանը դուրս է եկել հենց իր բաջանադի եղբոր դեմ:

Քաղաքապետի մյուս թեկնածուները Նախկին քաղաքապետ ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի թիմից են՝ Մարտին Հարությունյանը, Հայկ Առաքելյանը, ՀՀԳ-ից Աշոտ Ավագյանը: «Հանուն Հայաստան»-ի ցուցակով առաջադրվել է Սեւակ Մուսաթյանը:

Տեղի ունենալիք ընտրությունները նաեւ Սիսիանում դժգոհության ալիք են հասունացրել: Բնակիչները դժգոհում են, որ ԶԳ-ն գոնե թիկունքը գինի, թաքստոցի հարց լուծի, ընտրության ցուցակ է կարգավորում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՊԿ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ

ԵՐԿԱՐԱԶԳՎԵԼՈՒ ԵՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Կառավարությունն ընդունել է որոշում, որով առաջարկվում է մեկ տարով՝ մինչև 2023 թ. դեկտեմբերի 30-ը, երկարաձգել տնտեսավարողներին 100 հազար (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) լիտրը գերազանցելուց հետո կոնյակի սպիրտների այլ խմբաքանակների իրացման իրավունքի ձեռք բերման համար՝ վճարված լրացուցիչ 100 դրամ պետական տուրքերի չափով տրամադրվող պետական օժանդակության տրամադրման ժամկետը: Այն հնարավորություն կտա ապահովելու շուրջ 9.0 մլն լիտր կոնյակի սպիրտի արտահանում եւ պլանավորելու հետագա գործունեությունը, այդ թվում՝ խաղողի մթերումների ծավալները: Հիմնավորման համաձայն՝ տրամադրված օժանդակության չափը 2020 թ. կազմել է 403.7, 2021 թվականին՝ 859.6, իսկ 2022 թ. հուլիսի 28-ի դրությամբ՝ 261,65 մլն դրամ: Ընթացիկ տարում այդ նպատակով՝ պետական բյուջեով հաստատված ֆինանսական միջոցների մնացորդը կազմում է 338,35 մլն դրամ, որը կտրամադրվի մինչև 2022 թ. դեկտեմբերի 30-ը: Հաշվի առնելով, որ տնտեսավարող սուբյեկտների մոտ առկա է ավելի քան 44,4 մլն լիտր կոնյակի սպիրտի մնացորդ, եւ խաղողի բերքի մթերման համար անհրաժեշտ է ապահովել կոնյակի սպիրտի պահման ազատ տարողություններ՝ կոնյակի սպիրտի արտահանումը խթանելու եւ հետագա գործունեությունը պլանավորելու նպատակով անհրաժեշտ է վերը նշված օժանդակության տրամադրման ժամկետը երկարաձգել: Տրամադրվող օժանդակությունն իր գալի ազդեցությունն է ունենում արտադրանքի ինքնարժեքի նվազեցման միջոցով իրացման շուկայում ավելի մրցունակ գներով արտադրանք ներկայացնելու, արտահանման ծավալներն ավելացնելու վրա եւ արտահանման լոգիստիկ խնդիրների բացակայության պարագայում, գրեթե կրկնապատկվում են արտահանման միջին ամսական ծավալները:

ԵՎՍ ՄԵԿ ԱՄԻՍ

2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետեւանքով քաղաքացիական անհայտ կորածների (ինչպես նաեւ՝ գերեվարվածների) ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կառավարությունն ընդունել է որոշում: Ըստ հիմնավորման՝ քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների ընտանիքներին հատկացվող դրամական օգնությունը քաղաքացիական անձի հաշվով (ամսական 300 000 դրամի չափով) ստանալու համար դիմումը պետք է ներկայացվեր էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2022 թ. սեպտեմբերի 5-ը: Սակայն, մինչ այսօր քաղաքացիական անձանց շրջանում կան անհայտ կորածներ, որոնց ընտանիքներն ունեն շարունակական աջակցության կարիք: Ըստ այդմ՝ առաջարկվում է ընդունել որոշում, որով անհայտ կորածի, ինչպես նաեւ՝ գերեվարվածի ընտանիքները եւս 1 ամիս կստանան սոցիալական աջակցություն՝ ամսական 300.000 դրամի չափով, որի համար դիմում կարող են ներկայացնել մինչև 2022 թ. հոկտեմբերի 5-ը:

ՀԱՊԿ գլխավոր ֆարսուղար Սահմալավ Չապը Հայաստանում է: Երեկ նա հանդիպում է ունեցել ՀՀ Անվտանգության խորհրդի ֆարսուղար Արմեն Գրիգորյանի հետ: Հետաքրքիր է, որ հանդիպումների վերաբերյալ սարածված հայտարարություններում ակնհայտ սարբերություններ կան:

Հայկական կողմի հաղորդագրության մեջ օգտագործված է «լայնածավալ ագրեսիա» տերմինը, իսկ ահա ՀԱՊԿ պաշտոնական հաղորդագրության մեջ անգամ չեն հիշատակվում սեպտեմբերի 13-ից սկսված ռազմական գործողությունները: «Քննարկվել են տարածաշրջանում տիրող իրավիճակը եւ ստեղծված իրավիճակում ՀԱՊԿ-ի հետագա հնարավոր միջոցառումները», - Գրիգորյան Ջաս հանդիպման վերաբերյալ նշված է կառույցի տարածած հաղորդագրությունում:

Նշենք, որ Ջասը միայն երեկ է ժամանել Հայաստան, այնինչ սեպտեմբերի 13-ին հայ-ադրբեջանական սահմանին լայնածավալ ռազմական գործողություններից հետո պաշտոնական Երեւանը դիմեց ՀԱՊԿ-ին եւ Ռուսաստանին՝ ռազմական աջակցության խնդրանքով: Սակայն թե՛ Կրեմլից, թե՛ ռազմական կառույցից Հայաստանի օգնության խնդրանքը մերժվեց, իսկ ՀԱՊԿ-ն էլ որոշեց մոնիթորինգային առաքելություններ գործուղել:

Այդ առաքելություններից առաջինը ղեկավարող ՀԱՊԿ Միացյալ շտաբի պետ Անատոլի Սիդորովը դեռ նախքան Երեւան մեկնելն էր հայտարարել, որ դաշինքը Հայաստան գործ ուղարկելու ծրագրեր չունի:

«Ռազմական ուժի կիրառման մասին, այն էլ՝ ՀԱՊԿ-ի ներգրավմամբ, ո՛չ սեպտեմբերի 13-ին, ո՛չ երեկ, ո՛չ այսօր եւ ո՛չ էլ մոտ ապագայի մասով, ես կարծում եմ, խոսք չկա», - նշել է նա:

Սիդորովի գլխավորած առաքելությունը չորս օր անցկացրեց Հայաստանում ու իր դիտարկումները ներկայացնելով պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին՝ վերադարձավ Մոսկվա: Թե՛ ինչ հետեւությունների է հանգել Աֆղանստանում ու Չեչենիայում պատերազմած ռուս զենեղալը, Հայաստանի ռազմական գերատեսչությունից այսօր հրաժարվեցին հայտնել:

ՀԱՊԿ-ից բարձր մակարդակով հնչող դժգոհությունների ֆոնին՝ պաշտոնական Երեւանը դարձյալ խոսում է միջազգային մեխանիզմների մասին: Երկու օր առաջ Լեհաստանի արտգործնախարար,



ԵԱՀԿ գործող նախագահ Զբիգնեյ Ռաուի հետ հանդիպմանը արտգործնախարար Արարատ Սիրոգոյանը, խոսելով հայ-ադրբեջանական մարտերից, ընդգծել էր ԵԱՀԿ շրջանակներում առկա մեխանիզմների հրատապ գործարկման անհրաժեշտությունը:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Ստանիսլավ Ջասն այսօր Երեւանում հանդիպել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի հետ:

Ըստ ՀԱՊԿ պաշտոնական կայքէջի՝ մանրամասն քննարկվել է Հայաստանի սահմանամերձ շրջանների առանձին հատվածներում տիրող իրավիճակը, ինչպես նաեւ ստեղծված իրավիճակում ՀԱՊԿ հետագա հնարավոր միջոցառումները:

Ջասի գլխավորած առաքելությունը պետք է զեկույց պատրաստի ՀԱՊԿ անդամ-պետությունների ղեկավարների համար՝ տարածաշրջանում իրադրության մասին, եւ մշակի առաջարկներ՝ ուղղված «Հայաստան-Ադրբեջանի սահմանի առանձին շրջաններում առաջացած լարվածության թուլացմանը»:

Միջազգային մեխանիզմների մասին օգոստոսի սկզբին՝ Արցախում տեղի ունեցած մարտական գործողություններից հետո խոսել էր վարչապետ Փաշինյանը՝ հայտարարելով. «Եթե հայ-ռուս-ադրբեջանական ձեռագրվող հնարավոր չէ ապահովել շփման գծի անվտանգությունը, պետք է մտածել «լրացուցիչ միջազգային մեխանիզմների գործարկման մասին»»: Նա, սակայն, չէր մանրամասնել, թե ի՞նչ նկատի ունի «լրացուցիչ միջազգային մեխանիզմներ» ասելով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐԿԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԻ

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը սեպտեմբերի 20-21-ին կազմակերպել է Արցախի Հանրապետության ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի հանդիպումները ԱՄՆ մի խումբ կոնգրեսականների, սենատորների եւ օրենսդիր թեմի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Արցախի արտաքին քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

Հանդիպումներին մասնակցել են նաեւ Արցախի Հանրապետության կրթության,

զիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը եւ ԱՄՆ-ում ու Կանադայում Արցախի Մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

ՀԱՆԳԱՄԱՆԱԼԻՑ ԲՆՆԱՐԿՈՒՄ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Ստանիսլավ Ջասը սեպտեմբերի 22-ին Երեւանում հանդիպել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի հետ:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀԱՊԿ քարտուղարությունը: Տեղի է ու-

նեցել հանգամանակից քննարկում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների առանձին հատվածներում տիրող իրավիճակի վերաբերյալ: Քննարկվել են ստեղծված իրավիճակում ՀԱՊԿ-ի հետագա հնարավոր միջոցները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը սեպտեմբերի 22-ին աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն՝ մասնակցելու Մոսկվայում կայանալիք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Անկախ պետությունների համագործակցության տնտեսական խորհրդի հերթական նիստերին:

ՈՒՇԱԳՐԱՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՏԵՎԱՆՔ

ArmLur.am-ին հայցնի դարձավ, որ 2021 թվականի դեկտեմբերի 05-ին կայացած Ամասիա խոշորացված համայնքի ընտրությունների արդյունքները չընդունելով՝ 2022 թվականի հունվարի 4-ին Ամասիայի համայնքապետարանի կողմից ձեռնարկված ընդունող հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նախագահ, 2021 թվականի դեկտեմբերի 05-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների Ամասիա համայնքի ավագանու ընտրությունների արդյունքներով եւ համայնքի ավագանու՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3 –Ա որոշմամբ՝ համայնքի ղեկավար ընտրված Ջեմմա Հարությունյանի հետ այցելել են Բերդաշեն բնակավայրում գործող նախկին Արփի խոշորացված համայնքի համայնքապետարան՝ հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպելու նպատակով, որը տեղի չի ունեցել, քանի որ Արփի խոշորացված համայնքի նախկին ղեկավար Մերգել Գարիբյանը, օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ուղղակի դիտարկությամբ հրաժարվել է կազմակերպել գործընթացը, դրա փոխարեն՝ ինքնակամ իրականացրել է իր ենթադրյալ իրավունքները՝ խաթարելով Ամասիա խոշորացված համայնքի բնականոն գործունեությունը:



ընդգրկված վարչական բնակավայրերին վերաբերող պաշտոնական պարտականությունները լիարժեք իրականացնելուց՝ դրանով էական վնաս պատճառելով համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի իրավունքներին եւ համայնքի օրինական շահերին:

Բացի այդ, 2021 թվականի օգոստոսի 20-ին «Վեդի Պլաստ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում Աղվորիկ, Բերդաշեն, Զարիշատ, Զորակերտ բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի վերակառուցման աշխատանքներն ավարտելուց հետո, 2021 թվականի դեկտեմբերի 17-ից Արփի համայնքի ղեկավարի պաշտոնում լիազորությունները դադարեցված լինելու պայմաններում՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին կազմել եւ շինարարության օբյեկտի շահագործման հանձնելով՝ ընդունող հանձնաժողովի ակտը հանձնաժողովի անդամների հաստատման է ներկայացրել, որից հետո իր ենթադրյալ իրավունքներն իրականացնելով՝ ուղղակի դիտարկությամբ, ստորագրել եւ Արփիի համայնքապետարանի կլոր կնիքի դրոշմով հաստատել է այն, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել «Վեդի Պլաստ» ՍՊ ընկերության իրավունքներին ու օրինական շահերին, այն է՝ սուբվենցիայի ծրագրով նախատեսված 18.823.660 ՀՀ դրամը մինչ այժմ չի փոխանցվել ընկերությանը:

Բացի այդ, թիվ 22150322 քրեական գործով վարույթի ընթացքում 2022 թվականի մարտի 27-ին որոշում է կայացվել առգրավել նախկին Արփի խոշորացված համայնքին վերաբերելի գույքը, փաստաթղթերը, իսկ որոշմանը ծանոթանալու նպատակով՝ այն ներկայացվել է Մերգել Գարիբյանին եւ առաջարկվել հանձնել որոշմամբ նշված, առգրավման ենթակա փաստաթղթերը, ով, իր ենթադրյալ իրավունքներն ինքնակամ իրականացնելով, ուղղակի դիտարկությամբ՝ հրաժարվել է հանձնել առգրավման ենթակա փաստաթղթերը, գույքը եւ կնիքները, այդ կերպ էական վնաս պատճառելով համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի իրավունքներին եւ համայնքի օրինական շահերին:

Այսպիսով, Մերգել Սուրադի Գարիբյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով՝ հանրության համար վտանգավոր արարքները մեղավորությամբ կատարելու համար:

ԼՈՒԻՇՐ

ԳՈՐԾԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Սյունիքի մարզպետի ազատված տեղակալի քրեական գործը տեղափոխվեց Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Տիգրանի Ավանեսյանին մեղադրանք է առաջարկվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, զբաղեցնելով ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալի պաշտոնը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած իր 2021 թվականի գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրում թաքցրել է հայտարարագրման տարում 183 եւ ավելի օր անձի հետ համատեղ բնակվելու վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալը:

Հիշեցնենք, որ Ավանեսյանն ապրիլի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշմամբ ազատվել էր Սյունիքի մարզպետի տեղակալի պաշտոնից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԵՒԱՆ ՄԱՐԱՑԵԼ Է

Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 09:15-ի սահմաններում, ՌԿՖ բանվան-Արարատ ճանապարհին «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Իվելո» մակնիշի ավտոմեքենային. «Ֆորդ Տրանզիտ» 1-ամյա ուղեոր Ալեքս Շահբանդարյանը մահացել է, իսկ 36-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Այս մասին հայտնում են ոստիկանությունից:

Կատարվում է նախաքննություն:

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ԲԱԺԻՆ

Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, իրացնելով ստացված տեղեկությունները, ոստիկանության Գավառի բաժնի օպերատիվ խումբը մեկնել էր Գանձակ բնակավայր: Հ. Աբրահամյան փողոցում ոստիկանները, նկատելով, որ Նույն գյուղի 41-ամյա բնակիչ ձեռքին ինքնաձիգ կա, փորձել էին վնասագործել, սակայն նա ինքնաձիգից օդ կրակահերթ էր արձակել եւ դիմել փախուստի: Ոստիկաններին հաջողվել էր բռնել նրան, ձերբակալել եւ տեղափոխել բաժին: Այս մասին հայտնում են ոստիկանությունից:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարված գննությանը՝ դեպքի վայրում հայտնաբերվել է 5,45 մմ տրամաչափի ինքնաձիգի 8 պարկուճ:

Ջննությամբ՝ 41-ամյա տղամարդու առանձնատան բակում հայտնաբերվել են «ԱԿ» տեսակի ինքնաձիգ՝ պահուսակով, «Մակարով» տեսակի ատրճախակ՝ 2 պահուսակով, «Պարաբելում» տեսակի ատրճախակ՝ պահուսակով, տարբեր տրամաչափի 1098 փամփուշտ եւ 8 պարկուճ:

Տղամարդը հայտնել է, որ հայտնաբերված ձեռք-զինամթերքը ձեռք է բերել 44-օրյա պատերազմի ժամանակ:

Գանձակի 41-ամյա տղամարդը ձերբակալվել է: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ՃԱՄԲԱՐԱԿ

ԿՅՄԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ ԵՆ ՕՊԵՐԼԻԱԶՈՐԻՆ

ArmLur.am-ին մանրամասներ են հայցնի դարձել՝ ճամբարակի օդերկազմի սղանության դեղի մասով:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ օպերլիազորին սպանելու դեպքի ակնատեսներ են եղել եւ իրավապահներին պատմել են, թե ինչպես է եղել դեպքը: Ասել է թե՛ կոնկրետ ավագ օպերլիազորին ենթադրյալ սպանած անձի ինքնությունը հայտնի է, եւ նրան փնտրում են: Իսկ հիմա կարելի էր հանգամանքի մասին. ինչո՞ւ են սպանել ճամբարակի օպերլիազոր Սիփան Սարիբեկյանին, արդյո՞ք կատարվածը կապ ունի նրա մասնագիտական գործունեության

հետ: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նախնական տվյալներով՝ նրան սպանել են անձնական դրոշապատճառներով, որոնք կապված են մեկ այլ անձի ընտանիքի հետ: Նախաքննությանը չվնասելու եւ ընտանիքների անվտանգությունից ելնելով՝ այս պահին այլ մանրամասներ չենք ներկայացնում:

Նշենք, որ իրավապահները որոնում են ենթադրյալ սպանություն կատարողին: Shamshtyan.com-ը գրել էր, որ սեպտեմբերի 20-ին սպանություն է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 19:20-ի սահմաններում ճամբարակի առողջության կենտրոնից ոստիկանության ճամբարակի բաժնի սիստեմայից է ստացվել,

որ սուր կտրող-ծակող առարկայից ստացած բազմաթիվ վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել տղամարդու դի:

Երեւանի ճամբարակ էր շտապել ՀՀ ոստիկանապետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանը, Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արթուր Մկրտչյանը: Արդյունքում, պարզվել էր, որ սպանվածը Սիփան Սարիբեկյանն է, որ աշխատում էր ոստիկանության ճամբարակի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում՝ որպես ավագ օպերլիազոր, կոչումով ոստիկանության կապիտան էր:

ՔՍՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 20-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 68 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

Բերդ քաղաքից հայտնում են, որ սեպտեմբերի 21-ին՝ ոչ աշխատանքային տոնական օրը, Բերդ քաղաքի թիվ 3 միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել նախընտրական քարոզչական ժողով, որին մասնակցել են ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, քաղաքաշինության կոմիտեի նախագահ Տավուշի Նախկին՝ 15 տարի պաշտոնավարած մարզպետ Արմեն Դուլարյանը, Տավուշի մարզպետ Հայկ Դալումյանը, Բերդի միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնի տնօրեն, սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ խոշոր համայնքի ավագանու համամասնական ընտրություններում ԶՊ կուսակցության թեկնածուների 58 հոգանոց ցուցակի առաջին համար Վահրամ Սուքիասյանը, Բերդի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, ավագանու ընտրություններում ԶՊ կուսակցության ավագանու թեկնածու Զվարթ Ծատուրյանը, ԶՊ կուսակցությունից ավագանու թեկնածու, Բերդի թիվ 1 դպրոցի տնօրեն Անահիտ Զուհայանը, Բերդ քաղաքի հանրակրթական դպրոցների տնօրենները, ուսմասվարները, դպրոցական կուլեկտիվները: Պետական բարձր պաշտոնյաները մանկավարժներին հայտնել են, որ սեպտեմբերի 25-ի ընտրություններում հաղթելու է ԶՊ կուսակցությունը, Վահրամ Սուքիասյանը դառնալու է Բերդ խոշոր համայնքի ղեկավար: Բերդի ուսուցիչների՝ ԶՊ կուսակցությանը ընտրելու համար բարձր պաշտոնյաները նախընտրական խոստումներ են տվել, այն է՝ մինչև այս տարեվերջ Բերդ համայնքի բնակավայրերում հիմքից կառուցվելու է 4 դպրոց՝ իրենց մարզադահլիճներով, 8 մանկապարտեզ կորոզվելու է: Ընտրողների ձայները շահելու համար նման խոստումները ընտրական օրենսգրքի խախտում են: Նախընտրական հանդիպմանը մասնակցել է նաեւ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքոնյանը, ում մայրը՝ Արեւ Ներսիսյանը Բերդի թիվ 3 դպրոցի տնօրենն է:

ՏԵՂԱԿԱՅԵԼ ԵՆ ՊԱՀԱԿԱԿԵՏ

Դիլիջանի ոլորաններից առաջինում տեսական ընդմիջումից հետո կրկին տեղակայվել է ոստիկանական պահակակետ՝ ուր մշտապես հերթապահություն են իրականացնում ոստիկանության 2-3 մեքենաներ եւ բնապահական պետական տեսչության ավտոմեքենան: Պահակակետը գործում է՝ ապօրինի հատված փայտանյութը Տավուշի մարզի տարածքից արտահանելը կանխելու համար: Տավուշի մարզից դուրս ելող բեռնված ավտոմեքենաները, որոնք կասկած են հարուցում, ստուգվում են: Դիլիջանի ազգային պարկում ընդհանրապես արգելված են անտառահատումները, ապօրինի փայտ հատվում է մարզի 4 անտառտնտեսություններում: Տավուշի մարզի բնակիչները հայտնեցին, որ մարզում փայտի մեծ քիզնետով զբաղվում են վարչապետ Նիկոլ Փաշինյանի մտերիմ պաշտոնյաները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ Տավուշ

ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՏՆՎԱԾ

ՎԹԱՐԱՅԻՆ ԸՆԵՔԻ ՓԼՈՒԶՄԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

Օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր դայթյունից անցել է ավելի քան մեկ ամիս, բայց դեռևս աղետի գոտի համարվող «Սուրմալու»-ի սարածից չեն մաքրվել փլուզվածների հետքերը, չի աղամոնսածվել դայթյունազանգ վիճակում գտնվող շինությունը: Երեկ էլ հայքնի դարձավ, որ փրուզվել է դայթած շենքի դասը, ունենք երեք վիրավոր: Հինգ՝ հարց. ո՞ր կառույցն է տեղի ունեցածի համար դասասխանացվությունը վերցնելու իր վրա:



Պարզվում է՝ մեր պետական կառույցները ձեռքները լվացել են եւ անհետացել: Կառավարությունը բավարարվել է գումար փոխհատուցելով, եւ միայն: ՀՀ քննչական կոմիտեն վարդուց ավարտել է քննչական գործողությունները, բայց շենքն ապամոնտաժողը չկա: Ոչ միայն չկա, այլևս հայտնի չէ, թե ով է: Քննչական կոմիտեն, պետական եւ հանրային մարմինները միմյանց վրա են գցում պատասխանատվությունը: Օրեր առաջ քննչական կոմիտեից արդարանում էին, թե քննչական գործողություններ են ընթանում, իսկ քաղաքապետարանը շարունակում է հայտարարել, որ որեւէ լծակ չունի՝ մասնավոր տարածքում գործառնություններ իրականացնելու կամ միջամտելու: Ինչ է նշանակում լծակ չկա, երբ քաղաքապետարանի աշխատակիցները տեխնիկայով գնում ու մարդկանց շինությունները ապամոնտաժում են. այդ ժամանակ գործառնություններն են: Բայց հենց առաջին պետական մարմինը, որը պետք է շահագրգռված լիներ այդ տարածքն աղբից մաքրելու, վթարային շինությունն ապամոնտաժելու, հարցում, ուղտի ակնցում քնած են՝ քաղաքապետից սկսած:

Իրենց գործը համարել են ավարտված ու գնացել տուն: Որեւէ վերահսկողություն ոչ ԱԻՆ-ի եւ ոչ էլ քաղաքապետարանի կողմից չի իրականացվել, տարածքում տնտեսվարողները շարունակել են աշխատել, մարդիկ ելումուտ են արել: Բայց երբ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում խոշոր պայթյուն տեղավ, ԱԻՆ-ի ղեկավար կազմը շտապեց դեպքի վայր, լուսանկարվեց, մի կարգին PR արեց՝ ցույց տալով հանրությանը, որ աշխատում են: Աշխատանքի պտուղները երեկ տեսանքովթարային շինության պատը փլվեց, մարդիկ վիրավորվեցին, տնտեսվարողները վնասներ կրեցին:

«Թե ինչու գերատեսչությունները չեն արձագանքել, դա իրենցից ճշտեք: ԱԻՆ-ը որեւիցե գործառնություն չունի ապամոնտաժման, դրա համար էլ որեւիցե բան չի արել: Բազմիցս հայտարարվել է՝ եթե ապամոնտաժման արդյունքում ԱԻՆ-ի օգնությունը պետք լինի, մենք պատրաստ ենք»,- ArmLur.am-ին փոխանցեց ԱԻՆ մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը: Երեւանի քաղաքապետարանը դեռ այս պահի դրությամբ շարունակում է մնալ իր կարծիքին՝ «մասնավոր տարածքում քանդելու գործառնություն չունի»: Մինչդեռ կառավարության այսօրվա նիստում քաղաքաշինության ղեկավար Արմեն Դուլարյանը հայտարարեց, որ քաղաքապետը պետք է շտապ քանդման թույլտվություն տա: Իսկ մինչ այդ, արձանագրեց, որ սա առաջին դեպքն է, որ մեր պետական գերատեսչությունները մեկը մեկից տեղյակ չեն, գործը գցում են միմյանց վրա. այդ, եւ երեկվա փուլումը, երեք վիրավորը եւ տնտեսվարողների կրած լուրջ վնասների պատասխանատվությունը մնում է նշված կառույցների վրա:

ՄՅՈՒՆԷ ՀԱՍՄԱՆՈՒՄՅԱՆ

ՀՈՂԱՄԱՍԵՐ

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔ

Կառավարությունն իր երեկվա՝ սեպտեմբերի 22-ի նիստում որոշեց Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ճրագիր 3-ի օրհանգրվանում ՀՀ Արագածոտնի եւ Շիրակի մարզերի վարչական սահմաններում գտնվող որոշ սարածիցների նկատմամբ հանրության գերակա օտն ճանաչել:

Նշվածից բացի՝ որոշ խնդիրներ ի հայտ են եկել շինարարության ընթացքում. Մասնավորապես, ճանապարհի շեպի նախագծային թեքությունը բավարար չի եղել տվյալ հատվածում շեպի կայունությունն ապահովելու համար, եւ անհրաժեշտություն է առաջացել փոխել շեպի թեքությունը, ինչի արդյունքում ճանապարհահատվածի Մաստարա համայնքի միջով անցնող հատվածի օտարման շերտի լայնությունը մեծացել է եւ լրացուցիչ օտարման անհրաժեշտություն է առաջացել: Բացի այդ, Ակունք համայնքում ի հայտ են եկել կաղաստրային շեղումներ, որոնք ուղղելուց հետո Ակունք համայնքում գտնվող որոշ հողամասեր մասնակի ընդգրկվել են ճանապարհահատվածի օտարման գոտու սահմաններում, ուստի նշված տարածքները նույնպես օտարելու անհրաժեշտություն է առաջացել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նախագծով առաջարկվում է ծրագրի իրականացումն ապահովելու, երրորդ անձանց իրավունքներից ազատ տարածք շինարարին հանձնելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի Թալին համայնքի Ակունք, Մաստարա բնակավայրերի եւ Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի տարածքում գտնվող ընդհանուրը 33 հողամասերի օտարման գոտու սահմաններում գտնվող տարածքները ճանաչել հանրության գերակա շահ:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ խոսքը Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի երկայնքով գտնվող հողամասերի մասին է: Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի կառուցման համար անհրաժեշտ հողամասերն արդեն իսկ օտարվել են, սակայն դեպի վերակառուցվող ճանապարհի երկայնքով գտնվող մի շարք ազդակիր հողամասերի մոտեցումներ ապահովելու նպատակով՝ լրացուցիչ տարածքների օտարման անհրաժեշտություն է առաջացել:

Օտարվող սեփականության ձեռքբերող Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես կգա Ծրագրին իրականացնող կազմակերպությունը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը: Օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետն առաջարկվում է սահմանել 2023 թվականի մարտի 1-ը:

● Անցած 2 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 30-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՐԴՊՈՐՏԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակտն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հողանդակային եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեյալ լոտերը:

Լոտ 1-վաճառքը՝ որպես մեկ միասնական համալիր:

1.1 - ք. Երեւան, Շենգավիթ, Նորագավիթ 1-ին փողոց, 101/4 հասցեում գտնվող 120 ք.մ. օժանդակ շինություն, 47,8 ք.մ. անցագրային, 72,9 ք.մ. պահեստ, 321 ք.մ. օժանդակ շինություն, 1060,5 ք.մ. արտաքին մակերեսով ինքնակամ շինություններ են 0,3072 հա հողամաս (վկայականում որոշ շինություններ նշված են արտաքին մակերեսով): Մեկնարկային գինը՝ 360000000 ՀՀ դրամ:

1.2 - ք. Երեւան, Շենգավիթ, Նորագավիթ 1-ին փողոց, 101/5 հասցեում գտնվող 40,7 ք.մ. արտադրամաս, 6,76 ք.մ. շինություն, 5,3 ք.մ. շինություն, 12,92 ք.մ. շինություն, 10,64 ք.մ. շինություն, 3,35 ք.մ. սանհանգույց, 13,3 ք.մ. /26,6 խ.մ./ պարիսպ են 0,101217 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 40000000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - ք. Երեւան, Շենգավիթ, Նորագավիթ 1-ին փողոց, 4/2 հասցեում գտնվող 99,55 ք.մ. բնակելի տուն, 6,9 ք.մ. օժանդակ շինություն, 4,7 ք.մ. /14,1 խ.մ./ պարիսպ, 164,4 ք.մ. ինքնակամ կառուցված շինություններ են 0,088206 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 48000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հողանդակային եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 10.10.2022թ.-ին, Ժ. 12:00-ին, այնուհետև հողանդակային եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, Նույն վայրում, Նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախաձեռնող սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախաձեռնողը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում/աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չզերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Վրոշիբանկ» ՓԲԸ-ում՝ 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախաձեռնողի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուծման երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախաձեռնողը վերադարձվում է աճուրդի ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախաձեռնողը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առավելագույն պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախաձեռնողը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախաձեռնողը: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, Ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանուցանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրատարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.lcbst.am, www.akson.am կայքերը:

ՊԱՅՄԱՆՔ

35 ՀԿ-ՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ

Հայաստանյան 35 հասարակական կազմակերպություններ դահանջում են ՀՀ ոստիկանադեսը Վահե Ղազարյանի դաժնահանկությունը:



Նրանց տարածած հայտարարության մեջ ասվում է. «2022 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առավոտյան, Եռաբլուր գինվորական պանթեոնում վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցին ընդառաջ, ոստիկանության ծառայողները, բռնի ուժ կիրառելով, բերման ենթարկեցին զոհված գինծառայողների՝ ի սկզբանե խաղաղ եւ օրինական պահվածք ցուցաբերող հարազատների:

Չզակնորեն ենթակա է վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Ներքոստորագրյալ հասարակական կազմակերպություններն աշխատարարում ենք, որ անընդունելի է Հայաստանի ոստիկանության ղեկավարության կողմից քաղաքացիների նկատմամբ ապօրինի ուժային գործողություն կատարելու հրամանների արձակումը եւ կատարումը: Իսկ պետության պաշտպանության համար զոհված գինծառայողների ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն կատարելու եւ ազատությունից ապօրինի զրկելու հրամանների արձակումը նաեւ հատուկ է բարոյականության բոլոր շեմերը:

հանցավորության դեմ արդյունավետ պայքարի անկարողությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ներքոստորագրյալ հասարակական կազմակերպությունները համարում են, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պետք է պաշտոնից ազատվի (համապատասխան միջնորդություն ներկայացնելով ՀՀ նախագահին) ոստիկանության պետ Վահե Ղազարյանին:

Հարկ է նկատել, որ զոհված գինծառայողների հարազատների եւ ծնողների նկատմամբ կազմակերպված բռնությունը նաեւ խիստ բացասաբար է անդրադարձնում այս օրերին Հայաստանի սահմանները աղբրեջանական ագրեսիայից պաշտպանող գինվորների բարոյահոգեբանական վիճակի վրա:

Հակառակ պարագայում զոհված գինծառայողների հարազատների նկատմամբ ապօրինի բռնությունների եւ վկայակոչված այլ խնդիրների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է անձամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վրա:

Ոստիկանության՝ նման ոճով ղեկավարումը ոչ միայն չի բխում 2018 թվականի հեղափոխության եւ, առհասարակ, Ժողովրդավարության արժեքներից, այլեւ համարվում է այդ արժեքների հակասող ու նախկինում արձանագրված մի շարք պրոցեսների ցանկը (ինչպիսին է բարեփոխումների խոչընդոտումը, ներսում կոռուպցիայի դեմ պայքարի պակասը եւ

Սիեմույն ժամանակ, անընդունելի ենք համարում տեղի ունեցածի կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից արձանագրված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, առավել եւս՝ իշխանական խմբակցության որոշ ներկայացուցիչների կողմից ոստիկանության այս հանցավոր պահվածքն արդարացնելու փորձերը:

Հավելեցք, որ համարում ենք, որ ոստիկանական այս կազմակերպված հանցագործության հրաման արձակողներին քրեական հետապնդման ենթարկելը լուրջ ցուցիչ է լինելու՝ Հայաստանում դատաիրավական համակարգի անկախության վերաբերյալ:

ՆԱԽՈՎ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՀՐԴՊՈՐՏԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ (1)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակտն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետև՝ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Վրոշիբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեյալ լոտերը:

- ք. Երեւան, Կենտրոն, Պարոնյան փողոց, 28ա շենք, 38 հասցեում գտնվող 48,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26200000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Մաշտոցի փողոց, 11 շենք, 13 հասցեում գտնվող 75,34 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 10.10.2022թ.-ին, Ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետև՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, Նույն վայրում, Նույն ժամին՝ հողանդակային եղանակով: Աճուրդի ավարտը՝ 10.11.2022թ.-ին:

2. Ծառուսակելու է «Վրոշիբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեյալ լոտի բաց աճուրդը:

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 53ա/33 շենք, 27 հասցեում գտնվող 74,1 ք.մ. բնակարան են 7,2 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 28347500 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 10.10.2022թ.-ին, Ժ. 12:00-ին, այնուհետև

յուրաքանչյուր աշխատանքային օր, Նույն վայրում, Նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 10.11.2022թ.-ին: Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախաձեռնող սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախաձեռնողը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում/աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չզերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Վրոշիբանկ» ՓԲԸ-ում՝ 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախաձեռնողի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուծման երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդ

դին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախաձեռնողը վերադարձվում է աճուրդի ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախաձեռնողը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առավելագույն պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախաձեռնողը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախաձեռնողը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դարարման հետեյալ աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, Ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանուցանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրատարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.lcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

ՀԱՅՏՆԻՆԵՐԻՑ ՈՎ ԻՆՉՊԵՍ Է ԸՆՈՐ-ՀԱՎՈՐԵԼ

Սեպտեմբերի 21-ին ողջ աշխարհի հայությունը նույն էր Հայաստանի Հանրապետության Անկախության օրը, միևնույն ժամանակ շնորհակալով, թե ինչ դասնական ծանր օրեր է ապրում մեր երկիրը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեում Հայաստանի ժողովուրդը ծայրերի ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու օգտին:

ArmLur.am-ը ներկայացնում է հայկական շուրջաշրջանի այն ներկայացուցիչներին, ովքեր շնորհավորել են Հայաստանի Անկախության օրը:

Ղերասանուհի Տարեհ Յովակիմյան. «Չեմ պատկերացնում վիրահատեն ինձ, անգամ օրգաններ պակասի, լինեմ հիվանդանոցում ու մաման չգա ծնունդս շնորհավորելու [ճանապարհից էլ հաստատ տորթ կբերի, որ մոմը փչեմ ու էս անգամ երազանքս կիսատ չմնա]: Անկախս, շնորհավոր տոնդ... Հայ-Հայաստան»:

Ղերասան Գրիգոր Դանիելյան. «Կշնորհավորեմ իմ հայրենիքի ծննդյան տոնը նրան բուժելուց հետո... Ամեն մեկս մի քար պետքա դնենք ու կառուցենք, ոչ թե քարը նետենք քանդենք... Ի՛նչը շնորհավոր ...»:

Երգչուհի Նունե Եսայան. «Մեր Հայրենիք, ազատ, անկախ, Որ ապրել է դարերդար, իր որդիքը արդ կանչում է՝

Ազատ, անկախ Հայաստան»:

Երգիչ Թաթա Սիմոնյան. «Կանք, պետք է լինենք.

Շնորհավոր տոնդ, Հայաստանի Հանրապետություն»:

Պոլսահայ Սիրիլ. «Չար մշուշը պիտի հեռանայ քեզվե ու շուտով պիտի գան պայծառ օրեր: Պէտք է պինդ եւ ուժեղ մնանք, ըլլանք միասնական, որպեսզի ո՛չ ոք առիթ ունենա կեղտոտ խաղեր սարքելու եւ չարագործելու: Դուև տունն ես աշխարհասփիւռ հայութեան: Տօնդ շնորհավոր իմ չքնաղ Հայաստան»:

Հաղորդավար Սուրեն Շահվերդյան. «Մեր երկրի այս բարդ եւ դժվարագույն պահին Անկախությունը եւ այն պահպանելը դարձավ է մի այլ առաքելություն, մի



այլ հայրենասիրության փորձություն: Լավագույնները ուղքի կանգնեցին, պաշտպանելու մեր պետությունը, զոհվեցին, որ մենք ապրենք: Հավերժ հիշատակ նրանց: Միավորվենք, համատեղ ջանքեր գործադրենք մեր առաքելության շուրջ, այն է՝ պահպանել մեր անկախությունը, զարգացնել ու հզորացնել մեր հայրենիքը: Շնորհավոր տոնդ Հայաստան»:

Հիշեցնենք, որ 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունել է Հայաստանի անկախության հռչակագիրը, որտեղ նշված էր, որ ՀԽՍՀ-ն կազմալուծվում է եւ ձեւավորվում է նոր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը անկախության հանրաքվեի ժամանակ կողմ է քվեարկել ԽՍՀՄ կազմից դուրս գալու օգտին: 1991 թվականի նոյեմբերին Լեւոն Տեր-Պետրոսյանը ընտրվել է ՀՀ առաջին նախագահ: Հայաստանը լիակատար անկախություն է ձեռք բերել նույն տարվա դեկտեմբերի 26-ին՝ ԽՍՀՄ կազմալուծման արդյունքում

ԼԻՊԱ ԵՐԻԱԶՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«ԸՆԵՐՉԻ ԷՍ ԶԻ ԷՅ» ՍՊ Ընկերությունը մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ընկերության ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում կառուցված «ԸՆԵՐՉԻ ԷՍ ԶԻ ԷՅ» արեային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կվտժ (առանց ԱԱՀ):

Հեռ. (+374) 77 17 19 72:

Հասցե՝ ՀՀ ք. Երեւան Արտնոցի փ., 2. 8, բն. 82, Երեւան, Կարապետ Ուլենցու 31/2:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՈՒՏԲՈՒԼՍՏԻ ՀԵՏ

Լոնդոնի «Արսենալը» հետաքրքրված է գերմանական «Այնտրախտ Ֆրանկֆուրտի» կիսապաշտպան Իեսայեր Լինդստրոմի ծառայություններով:

Անգլիական ակումբի արդեն սկսել է բանակցել 22-ամյա դանիացի ֆուտբոլիստի գործակալի հետ եւ կփորձի տրանսֆերն իրականացնել ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ: Գործարքի գումարը կարող է կազմել 20 միլիոն եվրո:

Իեսայեր Լինդստրոմի պայմանագիրն «Այնտրախտի» հետ նախատեսված է մինչեւ 2026թ. հունիս:

Այս մրցաշրջանում Իեսայեր Լինդստրոմը բոլոր մրցաշարերում մասնակցել է 10 հանդիպման, խփել 3 գոլ:

ԵՎՐՈՊԱՅԻ ՍՈՒՊԵՐԳԱՎԱԾ

ՈւեՖԱ-ն մտադիր է փոխել ֆուտբոլի Եվրոպայի Սուպերգավաթի ձեւաչափը՝ վերածելով չորս թիմերի մասնակցությամբ մրցաշարի, կիսաեզրափակիչի եւ եզրափակիչի խաղերով, հաղորդում է AS-ը:

Մրցաշարին կարող են մասնակցել Չեմպիոնների լիգայի, Եվրոպայի լիգայի, Կոնֆերենցիաների լիգայի հաղթողներն ու հյուսիսամերիկյան ՄԼՍ-ի չեմպիոնը: Մրցաշարը կանցկացվի ամռանը Եվրոպայից դուրս:

Եվրոպայի Սուպերգավաթն անցկացվում է 1972 թվականից:

ՄԵԿ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ

Բելգիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ռոբերտո Մարտինեսը խոսել է սպասելիքների մասին՝ Ուելսի դեմ Ազգերի լիգայի առաջիկա խաղից:

«Շատ լարված եւ հետաքրքիր հանդիպում է սպասվում: Ուելսը հույսը չի դնում մեկ խաղացողի վրա, նրանք խաղադաշտում մեկ միասնություն են: Կարելի է 80 րոպե խաղալ շատ ուշադիր եւ կարգապահ, բայց հետո կենտրոնացումը կորցնել եւ ամեն ինչ տանուլ տալ: Ուելսի թիմը կարող է վերջին րոպեներին էլ փոխել ամեն ինչ: Պետք է շատ ուշադիր եւ զգույն լինել: Նրանք պայքարում են 90 րոպե», - Մարտինեսի խոսքը մեջբերում է «ՈւեՖԱ»-ի մամուլի ծառայությունը: Բելգիա - Ուելս հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 22:45-ին:

ՊԵՂՈՒՄՆԵՐ «ՄԵԾԱՍՈՐՈՒՄ»

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԲԱՑԱՌԻԿ ԳՏԱԾՈՆՆԵՐ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Պատմամշակութային հուշարձանների եւ դասնական միջավայրի դաշնային ծառայության ՊԱՄԿ-ի արժավախումբը (արժավախմբի ղեկավար՝ դոկտոր, պրոֆեսոր Աննա Փիլիպոսյան) «Մեծամոր» հնավայրի սարածումը 2022 թ. սեպտեմբերին մեկնարկած դեղաբուսական ընթացքում հայտնաբերել են բացառիկ գտածոներ:

Ինչպես հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից, դամբարանադաշտում պեղումները կենտրոնացել են N 22 դամբարանից հարավ-արևելք տեղակայված N 23 դամբարանում: Ըստ նախարարության՝ այն (2.50 x 2.10 մ) անխաթար վիճակում մեզ հասած դամբարան է՝ ծածկված միջին չափի քարերից կազմված զրահով: Դրա տակ բացվել է միջին ու մեծ քարերից շարված դամբարանախուցը (2.50 x 2.10 մ)՝ արեւելք-արեւմուտք

կողմնորոշմամբ: Դամբարանում, փայտե դիպապատգարակին կծկված վիճակում, կոնքոսկրերի հատվածում մեկը մյուսի վրա տեղակայված էին երկու անհատներ, որոնցից մեկի վերին կմախքը՝ ծախ, իսկ ստորինը՝ աջ կողքին: Անհատների հետ նույն մակարդակի վրա բացվել են 10 ամբողջական խեցանոթներ, որոնց մի մասը տեղադրված էր դիպապատգարակի տակ: Ստորին շերտում բացվել են եւս 8 ամբողջական անոթներ, որոնցից բացառիկ է կապտականաչավուն ջնարակապատ փոքրիկ սրվակը՝ իրանի վերին հատվածում պահպանված 2 միջանցիկ անցքերով: Անհատների պարանոցի եւ կրծքավանդակի շրջանները զարդարված էին ոսկուց, սարդիոնից, սաթից, անագից պատրաստված տարատեսակ ուլունքա-հատիկներով (գլանաձեւ, գնդաձեւ, ֆիլիգրան, հատիկազարդ, անվաձեւ), բաժանարարներով, կախազարդերով: Անհատներից մեկի նախաբազկի ոսկրերին առկա էին բրոնզից ապարանջաններ,

որովայնի հատվածում՝ անագից ճարմանդներ:

N 2 կմախքի ձեռնաթաթի հատվածում առկա էր անագե բարակ լարից մատանի: Նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհատներն արական եւ իգական սեռի են: Դամբարանում առկա հնագիտական նյութի նախնական ուսումնասիրությունը թույլ է տալիս դամբարանը թվագրել մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին քառորդով:

«Մեծամոր» հնավայրի տարածքում պեղումներն իրականացնում է հայ-լեհական արշավախումբը (լեհական արշավախումբի համադեղակավարը՝ Վարշավայի համալսարանի Հնագիտության ինստիտուտի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Քշիշտուֆ Յակուբյակ): Հնագիտական աշխատանքներն իրականացվել են երկու տեղամասերում՝ միջնաբերդից արեւելք տեղակայված քաղաքային թաղամասում եւ դամբարանադաշտի հատվածում:

● Սեպտեմբերի 24-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն սիրո մասին» ներկայացում: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ 19:00:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Զբաղվածության ոլեսական ֆադաֆակա- նության մեջ ինչպե՞ս է իրականացվում աշխատու- ժի սեղաւարդը:

Իրնիա Գեղամյան (34 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակում է իրականացում է աշ- խատուծի ներքին եւ արտաքին տեղաշարժի կարգա- վորման միասնական պետական քաղաքականությու- նը:

Լիազորված մարմինն աշխատուծի տեղաշարժը կարգավորելու նպատակով՝

1) օրենքով սահմանված կարգով կնքում է միջազ- գային պայմանագրեր՝ արտազան աշխատանքների կազմակերպման, ինչպես նաեւ աշխատանքային միգ- րանտների շահերի պաշտպանության հարցերով:

2) միջպետական հարաբերությունների վատթա- րացման, արտակարգ իրավիճակների դեպքերում հանդես է գալիս առանձին պետություններում ար- տազան աշխատանքի մեկնման աննպատակահար- մարության մասին հայտարարությամբ:

3) իրականացնում է նաեւ Հայաստանի Հանրապե- տության օրենքներով իրեն վերապահված այլ իրա- վունքներ եւ լիազորություններ:

Աշխատուծի ներքին տեղաշարժը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտաքին տեղաշարժը՝ նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Լիազորված մարմնի հետ հա- մագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետա- կան կազմակերպությունները կարող են կազմակեր- պել աշխատուծի ներքին եւ արտաքին տեղաշարժեր՝ ամենամյա ծրագրի եւ (կամ) Հայաստանի Հանրապե- տության միջազգային պայմանագրերի շրջանակնե- րում:

ԿՂՐԳ

ՀԱՐՑ. Կերակրողին կորցնելու դեպքում ովքե՞ր ու- նեն նույն սահմանը իրավունք:

Արսեն Ներսիսյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունի մահացած կերակրողի՝ կեն- սաթոշակ ստանալու իրավունք չունեցող՝

1) 18 տարին չլրացած երեխան՝ մինչեւ 18 տարին լրանալը:

2) առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակը՝ մինչեւ 26 տարին լրանալը:

3) ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով ինամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մա- հացած կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվա- ծով նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է սույն բնակության վայրում (հասցեում) եւ չի աշխատում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Կերակրողին կորցնելու դեպ- քում նպաստը նշանակվում է՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունենալու ամբողջ ժա- մանակահատվածի համար:

ԼՈՒՐ ԿՂՐԳ

Լուսանկարը՝ համացանցից



Կառավարության երեկվա նիստում որոշվեց վերա- բաշխման միջոցով 14,124.0 հազար դրամ հատկացնել՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հիշողության պուրակի տարածքն ընդար- ծակելու աշխատանքների ապահովման համար:

Հիշողության կամ եղենիների պուրակը հիմնադրվել է 1997 թվականին՝ դառնալով Հայոց ցեղասպանության հուշահամալիրի անբաժան մաս. այնտեղ ներկայումս աճում է շուրջ 200 ծառ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկիստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառ- նանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a dashed box for contact information.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 22.09.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: